ԶԵԿՈՒՅՑԱԳԻՐ

ՀՀ Արմավիրի մարզի Արագած համայնքի ղեկավարի հաշվետու զեկույցը 2012 թվականի ընթացքում համայնքում կատարված աշխատանքների վերաբերյալ.

Հարգելի համագյուղացիներ, ավագանու անդամներ, մարզպետարանի կողմից լիազորված ֆինասական բաժնի պետ պարոն Վ. Մկրտչյան Ձեզ եմ ներկայացնում համառոտ տեղեկություններ Արագած համայնքի ղեկավարի և աշխատակազմի 2012 թվականի ընթացքում համայնքում կատարված աշխատանքների, բյուջեի կատարողականի և ծախսերի վերաբերյալ:

Ասեմ ձեզ, ինչի մասին որ խոսելու եմ, դուք այդ ամենից տեղյակ եք և այդ աշխատանքները կատարվել են ամբողջ տարվա ընթացքում, ձեր աչքի առաջ:

Նախ և առաջ ասեմ, որ Արագած համայնքը, համայնքի յուրաքանչյուր բնակիչ իրեն առօրյա հոգսերով և խնդիրներով մշտապես գտնվում են գյուղապետարանի և, հատկապես, իմ ուշադրության կենտրոնում:

Սկսեմ տարվա սկզբից.

Մեր համայնքի բնակչությունը ամբողջությամբ զբաղվում է գյուղատնտեսական մշակաբույսերի մշակությամբ: Հետևաբար ձմռան ամիսները, համեմատական կարգով, կարելի է ասել, որ հողի մշակի համար հանգստի շրջան էին:

Այդ ամիսներին ինձ համար կարևոր էր գյուղացիների ձմեռային հանգստի կազմակերպման խնդիրը: Համայնքի կուլտուրայի տանը համայնքի միջոցներով վերանորոգված և կահավորված խաղասենյակը գործում է ամբողջ տարին:

Մենք համապատասխան միջոցառումներ ձեռնարկեցինք և կարողացանք ամբողջ ձմռան ընթացքում տաքացնել խաղասենյակը՝ գազի վառարանով: Խաղասենյակը դարձել է գյուղացիների ձմեռային հավաքատեղին:

Հավաքվում են, զրուցում, անցկացնում են իրենց ազատ ժամանակը, խաղում են նարդի, շախմատ, դոմինո:

Հաշվետու ժամանակշրջանում մշտապես իմ ուշադրության կենտրոնում է եղել նաև բնակչության բժշկական սպասարկման խնդիրը: Ես հաճախակի եմ այցելել համայնքի բժշկական ամբուլատորիա և հետաքրքրվել բնակչության առողջական վիճակով : Հետևել եմ բնակչության բուժսպասարկման գործընթացին:

Բուժսպասարկման մասին խոսելով՝ ասեմ, որ 2012 թվականի ընթացքում համայնքում ունեցել ենք 29-ը ծնունդ՝ 10 աղջիկ, 19 տղա:

Ձմռան ամիսներին մեզ հուզող հարցերից մեկն էլ այն էր, թե գարնանը մեր բնակիչները մոտավորապես քանի հեկտար և ինչ գյուղատնտեսական կուլտուրաներ են մշակելու: Գիտենալով, որ մեր բնակչությունը մասնագիտացել է հիմնականում կաղամբի տարբեր տեսակների, վաղահաս կարտոֆիլի և թարխունի մշակության գործում, և հետևելով ձեռք բերված սերմացուի և սածիլների մշակության աշխատանքներին, մենք գյուղապետարանի համապատասխան մասնագետների հետ մասնագիտական մոտավոր կանխատեսումներ արեցինք 2012 թվականի ընթացքում գյուղում մշակվող գյուղատնտեսական կուլտուրաների հեկտարների վերաբերյալ: Խոսելով գյուղատնտեսական աշխատանքների մասին՝ ասեմ, որ վաղ գարնանը « ԽՈՅ » ջրօգտագործողների ընկերության աշխատակիցների հետ համատեղ մաքրել և վերանորոգել ենք գյուղի ներտնտեսային ոռոգման ցանցը: Գարնանային անձրևներից հետո վերանորոգել ենք դաշտամիջյան ճանապարհները: Ուրախությամբ պետք է ասեմ, որ մեր համայնքում 2012թ ընթացքում արտադրվել է թարխունի , ելակի, կաղամբի և վաղահաս կարտոֆիլի առատ բերք:

Դրան նպաստել է նաև շուկայականից էժան գներով մարզպետարանի տրամադրած պարարտանյութի և դիզ վառելիքի հերթական խմբաքանակը:

Գյուղ.մթերքների բերքահավաքի նախօրերին ես պայմանավորվածություն ձեռք բերեցի գյուղում բեռնատար ավտոմեքենա, ավտոբուս և այլ բեռնատար տրասպորտային միջոցներ ունեցող բնակիչների հետ, որպեսզի նրանք համեմատաբար էժան գներով փոխադրեն նաև գյուղի մյուս բնակիչների բերքը , ովքեր տրանսպորտային միջոց չունեն: Ասեմ, որ կազմակերպչական աշխատանքների շնորհիվ գյուղում 2012 թվականի ընթացում բերքի փոխադրման խնդիր չի եղել:

Պայմանավորվածություն ենք ձեռք բերել Վրաստանի հանրապետության որոշ քաղաքացիների հետ, ովքեր մեր գյուղի արտադրած թարխունի բերքը արտահանում են նաև Վրաստանի հանրապետություն:

Շարունակելով խոսքս՝ տեղեկացնեմ Ձեզ, որ մեր համայնքում գյուղատնտեսական աշխատանքները, սկսած վաղ գարնանային սածիլացման աշխատանքներից մինչև բերքահավաքի ավարտը, ընթացել են նորմալ բնականոն հունով, առանց որևիցե լուրջ պրոբլեմների, համապատասխան ամկետներում՝ ըստ գյուղատնտեսական մշակաբույսերի:

Գյուղում գոյություն ունեցող գյուղատնտեսական տեխնիկան , գործիքները և մեխանիզմներն ամբողջությամբ բավարարում են համայնքի վարչական սահմաններում գտնվող գյուղ նշանակության հողերը մշակելու համար :

Ճիշտ ժամանակին սկսել ենք հացահատիկի բերքահավաքի աշխատանքները, համապատասխան միջոցառումներ ենք ձեռնարկել, որպեսզի առանց խոչընդոտների սեղմ ժամկետներում ավարտենք հացահատիկի բերքահավաքի աշխատանքները:

Ես, որպես համայնքի ղեկավար, իմ ուշադրության կենտրոնում եմ պահում գյուղի դպրոցը՝ իր առօրյա հոգսերով և խնդիրներով:

Հաճախակի եմ այցելում դպրոց և հետևում կրթական գործընթացին, մշտապես մասնակցում և իմ աջակցությունն եմ ցուցաբերում դպրոցում կազմակերպվող միջոցառումներին:

Մասնակցել ենք վերջին զանգի կապակցությամբ կազմակերպված միջոցառմանը: Դրամական միջոցներով աջակցեցինք կազմակերպված միջոցառմանը : Սեպտեմբերի 1-ին մասնակցել եմ նոր ուսումնական տարվա և գիտելիքի օրվա կապակցությամբ դպրոցում կազմկերպված ցերեկույթին:

Այդ օրը թվով 28 առաջին դասարանցիներ համայնքի բյուջեի միջոցներից ստացան դպրոցական պայուսակ և գրենական պիտույքներ: Սեպտեմբերի 21-ին Անկախության տոնին նվիրված, համայնքի կուլտուրայի տան հարակից հրապարակում համայնքի բնակիչների և երեխաների համար կազմակերպեցինք հետաքրքիր միջոցառում : Հրավիրեցինք հեքիաթային հերոսների և անհատ երաժշտական կատարողների, երեխաներին բաժանեցինք քաղցրավենիք: Մասնակցել ենք նաև ամանորի տոների կապակցությամբ դպրոցում կազմակերպված միջոցառումներին : I- IV-րդ դասարանի աշակերտները համայնքի բյուջեի միջոցների հաշվին ստացան տոնական նվերներ:

Տեղեկացնեմ ձեզ, չնայած դուք էլ դա գիտեք, որ անցած տարվա դեկտեմբեր ամսից երեխաների քիչ թվաքանակով մասնակի սկսեց աշխատել համայնքի մանկապարտեզը:

Ասեմ, որ այժմ մանկապարտեզը աշխատում է լիարժեքորեն: Մանկապարտեզ են հաճախում համայնքի 3-ից 5 տարեկան 66 երեխա: Երեխաները ապահովված են լիարժեք սնունդով:

Մանկապարտեզի բացումը լուծեց նաև համայնքի 12 բնակչի աշխատատեղի հարցը: Մանկապարտեզը ապահոված է համապատասխան գույքով՝ խաղային և գրենական պիտույքներով, ունի կից խաղահրապարակ և ծաղկանոց: Ապահոված է խմելու ջրով և սանհանգույցով:

Խոսելով դպրոցի և երեխաների մասին՝ ասեմ, որ զբաղվում եմ մեր երեխաների առողջության և ֆիզիկական պատրաստվածության խնդիրներով: Հունիսի 10-ից, ի ուրախություն մեր երեխաների, մաքրեցինք և ջրով լցրեցինք գյուղի լողավազանը: Մշտապես ջուրը պահում ենք մաքուր վիճակում՝ պահպանելով սանիտարա-հիգիենիկ կանոնները: Լողավազանում գալիս են լողանալու նաև հարևան համայնքների երեխաները:

Մարտի 8-ի կապակցությամբ դպրոցի ուսուցչուհիներին մանկապրտեզի և բուժ-ամբուլատորիայի աշխատակցուհիներին տրամադրել ենք նվերներ՝ համայնքի բյուջեից ծախսելով 271,000 դրամ:

Կանանց միջազգային օրվա՝ մարտի 8-ի կապակցությամբ համայնքի կին թոշակառուներին տրվել են նվերներ, որի համար համայնքի բյուջեից տրամադրել ենք 675,000 դրամ: Բանակի օրվա կապակցությամբ ավանդաբար նվերներ բաժանեցինք նաև համայնքի արական սեռին պատկանող թոշակառուներին, որի համար ծախսել ենք 480.000 դրամ: Որպես մարդ և համայնքի ղեկավար, ես մշտապես հետաքրքրվում եմ մեր բնակչության սոցիալ-տնտեսական վիճակով: Ցավով եմ նշում, որ մեր համայնքում դեռևս կան սոցիալապես անապահով ընտանիքներ և գյուղապետարանը ուշադրության կենտրոնում է պահում այդ ընտանիքներին:

Այս տարի դրամական օգնություն են ստացել 3,499,600 ընտանիքներ:

2012 թվականի հունվարից համայնքում ևս մեկ գեղեցիկ միջոցառում ենք նախատեսել: Համայնքի այն ընտանիքները, որտեղ երեխայի ծնունդ է գրանցվում, գյուղապետարանի կողմից 25,000 դրամի չափով նորածիներին հագուստի պարագաներ և խաղալիքներ ենք նվիրում:

ԴՈՍԱՖ-ի ավտոդպրոցում սովորող 5 ուսանողների , որպես ճանապարհածախս, տրամադրել ենք դրամական միջոցներ:

Շարունակելով խոսքս, ասեմ 2012 թվականի ընթացքում պարբերաբար, նաև ըստ անհրաժեշտության փոխել ենք գյուղի կենտրոնական պողոտայի գիշերային լուսավորության համակարգի փչացած լամպերը և անջատիչը: Գարնան սկզբին մաքրել ենք կենտրոնական պողոտայի հարակից ոռոգման ներտնտեսային ցանցը: Բարեկարգել ենք կենտրոնական պողոտայի ծաղկանոցը, տնկել ենք բազմերանգ վարդեր և այլ ծաղիկներ:

Բարեկարգել ենք և պատշաճ տեսքի բերել Հայրենական Մեծ պատերազմի զոհերի հիշատակին կառուցված հուշարձան – կոթողի տարածքը:

Խոսելով գյուղում կատարված աշխատանքների մասին՝ ասեմ, որ այս տարի ձեր աչքի առաջ նույնպես աշխատանքներ ենք կատարել խմելու ջրի ներտնտեսային ցանցի վրա : Մեր աշխատանքները անարդյունք չեն, և Դուք դա նկատում եք:

Գյուղն ապահովված է 24 ժամյա խմելու ջրով, տեղադրված են ջրաչափեր: Համայնքի սանիտարա - հիգիենիկ վիճակի մասին խոսելով՝ ասեմ, որ համայնքում աղբաթափության և սանմաքրման աշխատանքներն իրականացվում են գյուղապետարանի կողմից սահմանված համապատասխան գրաֆիկով: Աղբահանության և սանմաքրման աշխատանքների կատարման համար 2012 թվականին ընթացքում համայնքի բյուջեից ծախսել ենք 2500000 դրամ :

2012 թվականի ընթացքում ասֆալտապատել ենք 8-րդ փողոցի կիսատ մնացած հատվածը, ինչպես նաև գերեզմանոց տանող ճանապարհի մի հատվածը: Մասնակի վերանորոգել ենք և ասֆալտապատել ենք գլխավոր պողոտայում առաջացած փոսերը:

Խոսելով կատարված աշխատանքների և աշխատակազմի կատարած աշխատանքների մասին՝ շարունակեմ.

գյուղապետարան դիմած ցանկացած բնակիչ ստացել է իրեն հուզող հարցի պատասխանը՝ ՀՀ օրենքներին համապատասխան:

Բնակիչներին ենք տրամադրել թվով 1006 տարբեր բնույթի և բովանդակության տեղեկանքներ:

Վերջում խոսեմ համայնքի հողի հարկի, գույքահարկի, տեղական վճարների հավաքագրման և բյուջեի կատարման ընթացքի մասին:

Ի ուրախություն մեզ և համայնքի բնակիչների մենք խանդավառությամբ ընդունեցինք կառավարության որոշումը, որը վերաբերվում էր մինչև 2008 թվականը հողի հարկի և գույքահարկի նկատմամբ բնակիչների ունեցած ապառքների և տույժերի նկատմաբ արտոնություններ տրամադրելուն: Մեր բնակիչները գիտակցաբար մոտեցան այդ մարդասիրական քայլին և օգտվելով առիթից բնակչության 90%-ը 2012 թ, ընթացքում վճարեցին 2008 թվականի հունվարի 1-ից գոյացած իրենց հողի հարկի և գույքահարկի ապառքները:

Իսկ այն բնակիչները, ովքեր չօգտվեցին տրամադրված արտոնություններից 2013 թվականի հունվարի 1-ից նրանց ունեցած ապառքները գանձվելու են տույժ և տուգանքների հետ միասին՝ կառավարության որոշման համաձայն:

Ավարտելով խոսքս ցանկանում եմ մեր համայնքի բոլոր բնակիչներին 2013 թվականի ընթացքում առողջություն, հաջողություններ նպատակների իրականացում, թող 2013 թվականը մեր բոլորի համար լինի խաղաղ, բարեբեր, լիառատ և արևշատ տարի:

Հաշվետու ժամանակաշրջանում բյուջեի կատարումը ներկայացնում եմ ըստ ներքոհիշյալ աղյուսակի:

	Պլանային	Փաստացի	Տոկոսային
Հողի հարկի հավաքագրում	13505,5	13690,9	101,3 %
Գույքահարկ փոխադրամիջոցներից	3000,0	2989,5	99,6 %
Գույքահարկ շենք շինություններից	600,0	399,7	66,6 %
Տեղական տուրքեր	288,0	237,6	82,5 %
Հողի հարկի վարձակալական վճար	120,0	133,1	111 %
Բյուջեի համահարթեցման դոտացիա	32327,8	32327,8	100 %
Տեղական վճար	150,0	59,9	39,9 %
Աղբահանություն	1000,0	737,7	73,7 %
Ընդամենը	**50991.3**	**50576.2**	**99.1%**

Ծախսային մասով

	Պլանային	Փաստացի
Աշխատավարձ	18850,0	18286,1
Պարգևատրում	1450,0	1300,0
Սոցիալական վճարներ	4100,0	3600,3
Էներգիայի և գազի ծառայություն	2000,0	1559,3
Կոմունալ ծառայություն	150,0	100,0
Կապի ծառայություն	600,0	388,4
Համակարգչային ծառայություն	150,0	81,6
Տեղեկատվական ծառայություն	272,7	151,4
Ընդհանուր բնույթի այլ	500,0	331,0

Տրանսպորտային նյութեր	1700,0	1700,0
Գրասենյակային նյութեր	600,0	600,0
Մանկապարտեզ /սուբսիդիա/	7933,3	7933,2
Կոմունալ ծառայություն / աղբահանություն	2500,0	2500,0
Երիտասարդական	1200,0	1200,0
Սոցիալական օգնություն	3500.0	3499.6
Փողոցների լուսավորում	300,0	300,0
Մասնագիտական ծառայություն	450,0	415,0
Ներկայացուցչական ծախսեր	2700,3	2700,0
Շենքեր և շինություններ	10880,0	10880,0
Գեոդեզիական քարտեզ	100,0	100,0
Վարչական սարքավորումներ	4249,9	2658,2
Բուժ- ամբուլատորիայի կոմունալ ծախսեր	100,0	100,0
Բուժ-ամբուլատորիայի էներգետիկ ծառայություն	150,0	150,0

Զեկուցող՝

Համայնքի ղեկավար՝ Ա. Կամավոսյան

?????? ??????????
Mar 14 2013 3:08 PM